ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1315-Ա « 05 » ապրիլի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածով՝

1.Հաստատել Երևանի ենթակայության.

1) «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ», «Երևանի Ավան համայնքի թիվ 1 գրադարան», «Թիվ 5 գրադարան», «Թիվ 6 գրադարան», «Թիվ 40 գրադարան», «Օքրո Օքրոյանի անվան թիվ 3 գրադարան», «Թիվ 10 գրադարան», «Թիվ 11 գրադարան», «Թիվ 25 գրադարան», ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի N 22 գրադարան, «Գրադարանային համակարգ», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Համո Սահյանի անվան գրադարան», «Թիվ 34 գրադարան», «Երևանի հ.16 գրադարան», «Երևանի Շ.Կուրղինյանի անվան հ.17 գրադարան», «Երևանի հ.18 գրադարան», «Երևանի հ.32 գրադարան» և «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի կենտրոնացված գրադարանային համալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն հ.հ. 1-36 հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին.

1) եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով «Պարգևատրում» հոդվածի գծով նախատեսված գումարները, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին նախատեսված դրամական միջոցների ազատ մնացորդներն օգտագործել բացառապես Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հետ համաձայնեցնելուց հետո.

2) բացառել կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հոդվածների գծով գերածախսերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ.Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ